VEOLIA
Ջուր

ՀՀ Արմավիրի մարզ
Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանին
/հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար
Նաիրի 42/

«04» 09 2025թ.

N ԼԲ/ 32063

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 13.08.2025թ. թիվ 2349 գրության՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ՎՋ3602/2025 ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը:

Տեխնիկական պայմանի հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը և այն Քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների urban.e-gov.am հարթակի միջոցով համաձայնեցնել մյուս շահագրգիռ կառույցների հետ:

Տեղեկացնում եմ, որ նոր համակարգի կառուցման աշխատանքներն իրականացվում են Դիմող անձի հաշվին՝ օրենսդրության համաձայն համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից:

Նոր միացման աշխատանքները պետք է կատարվեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ համաձայնեցված նախագծով՝ տեխնիկական կանոնակարգերի, շինարարական նորմերի ու կանոնների պահանջներին համապատասխան:

Կառուցված նոր համակարգի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ համակարգին միացումն իրականացնելու նախահաշիվը Ձեզ կտրամադրվի Ընկերության կողմից:

Նոր համակարգի կառուցումից հետո անհրաժեշտ է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ կառուցված համակարգի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ համակարգին միացումն իրականացնելու, առնտրային հաշվառքի սարքեր տեղակայելու համար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետությանն անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Առդիր՝ 2 թերթ:*

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 4464
«08» 09 2025թ.

Պատասխանատու՝
Լ. Բարեյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 32063
«04» 09 2025 թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 0025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

VEOLIA
Ջուր

«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Գ.Վարդանյան
«03» 09 2025թ.

# Տեխնիկական պայման ՎՋ 3602 /2025

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման շրջանցման, նախագծման)

Մ. Արմավիր, h. Փարաքար բնակավայրի թվով 11 փողոցներ
/Տարածքի հասցե/

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնք
/Անուն, ազգանուն/

060530042
/Հեռախոսահամար/



| Համակարգ | Ջրամատակարարում | Ջրահեռացում |
|---|---|---|
| Կոմունիկացիայի գտնվելու վայրը | 1.Մայրաքաղաքային փողոց 37 հասցեի («Գիգանտ» շաուրմա) հետնամաս<br>2.Փարաքարի միջնակարգ դպրոց հարևանությամբ | - |
| Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը | 1.d=150մմ, P=4.0մթն. պող.<br>2.d=150մմ, P=1.3մթն. թուջ | - |
| Միացման կետը | Մայրաքաղաքային 37 հասցեի («Գիգանտ» շաուրմա) հետնամասով անցնող ջրագիծը վերակառուցելուց հետո, ջրամիացումը կիրականացվի Փարաքարի միջնակարգ դպրոցի հարևանությամբ գտնվող 2.d=150մմ ջրագծից | - |
| Միացման տրամագիծը | Համաձայն նախագծի | |
| Ջրաչափի տրամագիծը | | |
| Այլ պահանջներ | Առկա բաժանորդների ջրաչափական հանգույցների համար նախատեսել ջրաչափական դիտահորեր տարածքներից դուրս՝ սահմանազատման կետերում | - |
| Ջրամատակարարման գրաֆիկը | 1.Շուրջօրյա<br>2. 9.00-15.00 | - |

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին :Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքերն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները:

Տեխ. պայմանների մասնագետ՝ [signature] Մ. Մաքևոսյան

# Ցանկ

1. Միացման վճարի անդորրագիր
2. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված տեխնիկական վերահսկման ակտ
3. Վերահսկողություն իրականացրած կազմակերպության լիցենզիայի ներդիրի /շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ հիդրոտեխնիկական/ պատճենը
4. Ծածկված /միջանկյալ/ աշխատանքների ընդունման ակտ(եր)
5. Մոնտաժվող խողովակի սերտիֆիկատ
6. Մետաղական խողովակների դեպքում եռակցման կարանների եզրակացություն
7. Հիդրավլիկ փորձարկման ակտ
8. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացություն (լվացում ախտահանում)
9. Կատարողական Ակտ ՁԿ-2 (ջրամատակարարում, ջրահեռացում)
10. Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ
11. Շինարարական աշխատանքներն իրականացրած կազմակերպության լիցենզիայի ներդիրի /շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական/ պատճենը